ԼՈՐՈՒՏԻ ԲՐՈՆԶԵ ԳՈՏՈՒ ՆԱԽՇԱՁԱՐԴԵՐԸ

ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆ

1979 թ. սեպտեմբերին Թումանյանի շրջանի Լորուտ գյուղի Վերին Թաղ կոչվող ուշ բրոնզեդարյան գերեզմանոցի մի սալարկղյա դամբարանից գտնվեցին հետաքրքիր նյութեր[1], որոնց մեջ չափազանց ուշագրավ էր բրոնզե գոտին[2] (նկ. 1. երկարությունը 93 սմ, լայնությունը՝ 14 սմ)։ Գոտու երիզները երկայնակի պատված են եռափաթեթ, անվերջանալի պարույրներով, որոնց միջև, գոտու ամբողջ մակերեսով, տարածված է մի ինքնատիպ տեսարան՝ ձիերի, գիշատիչ կենդանիների, ձկների և թռչունների դինամիկ պատկերներով։ Ինչպես նախշաղարդերը, այնպես էլ բոլոր պատկերները արված են սուր, բարակ փորագրիչի օգնությամբ՝ չափազանց նրբորեն ու վարպետությամբ։ Զարմանք են պատճառում փորագրող վարպետի հմտությունը, պատկերների ռեալիստական ընկալումը, չափի զգացումը, անատոմիական գիտելիքները, և ամենից կարևորը՝ կոմպոզիցիայի ստեղծման բացառիկ մեծ կարողությունը։

Կոմպոզիցիայում բարության հզոր ուժերին հակադրվում են չարությունն և խավար ներկայացնող կենդանիները, երկրային չար ուժերը տրված են վագրակերպ կենդանու պատկերով, երկնայինը՝ գիշատիչ թռչունների, իսկ ջրայինը՝ ձկների։ Երկրային չար ուժերի խորհրդանիշ գիշատիչ կենդանին՝ վագրը, որը գլխին ունի եղջյուրավոր դիմակ, խանգարում է մարդկանց լույս ու արև պարգևող բարերարին, ամենակարող կենդանուն՝ հրեղեն ձիուն, որը պայքարի վերջնագծում հաղթում է խավարին, ինչպես հեքիաթներում։ Պայքարի տեսարանը կոմպոզիցիոն առումով կազմված է մեկը մյուսին հաջորդող չորս փուլերից։ Առաջին փուլում, ձախից, մթի ու խավարի խորհրդանիշ մահիկին՝ գիշերվա տիրակալին, հրում է հրեղեն ձին։ Երկրորդ պատկերում նույն ձիու զրահադիմակի եղջյուրները մխրճվել են մահիկի մեջ։ Երրորդում՝ հուժկու հարվածի հետևանքով ամբողջ զրահադիմակն է մխրճվել մահիկի մեջ, իսկ չորրորդում հարվածն այնքան ուժեղ է, որ ձիու գլուխը կարծես ձուլվել է մահիկին և այն հասցրել խավարը պատնեշող սարերի եզրին։ Բարերար ձիու զեմհանդիման կռվի բռնվելու են լողում ջրային խավարի խորհրդանիշ ձկները, իսկ երկնային չար ուժերի խորհրդանիշը՝ երկարակուց թռչունները, կտցահարելով մահիկի զեմ պայքարի մեջ մտած ձիու ետևի ոտքերը և նրան օգնության հասնող մյուս ձիու մեջքը, դարձյալ ձգտում են դրանց խանգարել, ետ պահել պայքարից։ Ձիերի հուժկու հարվածներից երկնային խավարի ու չարության պահապան թռչունները վերջնագծում պատկերված են ձիերի ոտքերի տակ՝ կտուցներով մխրճված գետնի մեջ ու պարտված։

Բարերար ձիերը իրենց մեջքին կրում են ամբողջ մարմինը ծածկող, չորս զարդարուն ամրակապիչներով ծածկոց-թամբեր, որպիսիք մենք հանդիպում ենք հայկական հերոսավեպի Քուռկիկ-Ջալալիի վրա, ուստի սխալված չենք լինի, եթե ասենք, որ այս պատկերը կարող է հիմք հանդիսանալ հայկական հեքիաթների ու հերոսավեպի ակունքների համար։

---

1 Վ. Վ. Ավետյան, Հին հուշարձաններ Լորուտի տարածքում (ՀՍՍՀ ԳԱ զեկուցեալ հասարակական գիտություններից», Երևան, 1981, № 8, էջ 113—115)։

2 Ս. Եսայան, Վ. Ավետյան, Լոռիում հայտնաբերված բրոնզե գոտիներ («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 314—317)։

Վարպետը չափազանց նուրբ ու ռեալիստորեն է քանդակել այս դիցաբանական անկրկնելի սյուժեն։ Այստեղ յուրաքանչյուր բաղադրամաս ու դրվագ անթերի է իր դինամիկ շարժման մեջ։ Հզոր կամքի և ուժի դրսևորումը, չար ուժերի պարտությունը ամբողջ կոմպոզիցիայի բովանդակությունն են կազմում։



Նկ. 1. Լորուտի գոտի։

Գոտու եզրազարդերը նույնպես իմաստազուրկ չեն. գուցե եռահյուս պարույրները տիեզերքի անհատնում տարածության մեջ երեք չար ուժերի՝ երկրային, երկնային և ջրային, միատեղ, միասին հանդես գալու, լույսը պատնեշելու միտք են պարունակում։

Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի և այլ հնավայրերից բազմաթիվ գոտիներ են հայտնի, սակայն Լորուտի գոտին չի կրկնում դրանցից և ոչ մեկին։ Տարբեր են ոչ միայն դրանց պատկերները ու սյուժեները, այլև պատկերների շարժման դինամիկան, շարժման հուժկու թափը, անզիջում ու հաղթական պայքարի ռեալիստական նկարագրությունը։ Մինչդեռ այն նմանություն ունի Հայաստանի տարածքից գտնված մի քանի գոտիների նախ-



Նկ. 2. Բշնի, XIII դ. խաչքար։

շազարդերի հետ։ Այսպես. Ախթալայի, Սանահինի, Հաղպատի, Ստեփանավանի, Սևանի, Աստղաձորի վաղուց հայտնի բրոնզե գոտիների պատկերները նման են Լորուտի գոտու պատկերներին, այն տարբերությամբ, որ դրանց վրայի կենդանակերպ պատկերները ֆանտաստիկ են, ոճավորված, իսկ կենդանական ու բուսական աշխարհի երեք հզոր տարրերը՝ երկրային, երկնային ու ջրային, սիմվոլիկ խորհրդանշաններով են պատկերված։ Լորուտի գոտին իր ռեալիստական կուռ կոմպոզիցիայով ու պատկերներով մի եզակի նմուշ է։

Լորուտի գոտին, անշուշտ, ունեցել է պաշտամունքային՝ մոգիկ, կրոնական նշանակություն, որի կրողը զինված ու զարդարված է եղել անհրաժեշտ պարագաներով ու միջոցներով և պատրաստ՝ չար ոգիների ու չար ուժերի դեմ պայքարելու։ Այդ են վկայում ենթադրյալի ձեռքում խոցելու պատրաստ վիճակում գտնված երկաթե սուրը, ոտքերի վրայի զարդակախիկները, պարանոցի գույնզգույն ուլունքները, որոնք հմայիլի նշանակություն են ունեցել, և ձեռքերի ապարանջանները։



1



2





3

Աղյուսակ I

Ինչպես երևում է իրեղեն գտածոներից, գոսին կաշվե ժապավեններով է կապվել մեջքին, իսկ ժապավենները գոտուն ամրացվել են կաղապարման եղանակով պատրաստված կլոր, ուռուցիկ, բրոնզե կոճականման բևեռներով։ Գոտու երկու ծայրերին եղած երեք կլոր անցքերի մեջ ժապավենի վրա ամրացված վիճակում գտնվել են չորս բևեռ կոճակներ, որոնք կատարել են ճարմանդի դեր։

Լորուտի գոտուն կոմպոզիցիայի առանձին դրվագներով նման է Սանահինի գոտին[3], որի վրա երկշարք զույգ ձիեր են գոտեմարտում լուսնի մահիկի դեմ, հավանաբար մութն ու խավարը պահող սարերից այն կողմ նետելու ձգտումով։ Այդ նույն պատկերը կա Լորուտի գոտու վրա, այն տարբերությամբ, սակայն, որ այստեղ մահիկին հրում է մեկ ձի։

Սանահինի և Լորուտի գոտիների կենդանական պատկերներում միանգամայն նման ոճի են թռչունները և ձիերը։ Սանահինի գոտու վրայի առջևի ձիերը պարանոցից մինչև գավակը ունեն մարմնապաշտպան ծածկոցներ, որոնք ամրացված են չորս զարդարուն ամրակապիչներով, իսկ ձիերի մարմնի բաց մասերը ծածկված են մանր շտրիխներով։ Տարբերությունը թերևս այն է, որ Լորուտի գոտու ձիերի մարմնի բաց մասերի շտրիխները վերից վար են, իսկ Սանահինինը՝ լայնակի։ Երկու գոտիների ձիերն էլ կրում են զրահադիմակներ։

Լորուտի գոտու եզրագծերի բարդ ոլորահյուս զարդին միանգամայն նման են Խոջալիից գտնված ուշ բրոնզեդարյան գոտու եզրազարդերը[4], այն տարբերությամբ միայն, որ Խոջալիի գոտու ոլորահյուս, անվերջանալի զարդը երկճյուղ է, իսկ Լորուտինը՝ եռաճյուղ։ Խոջալիի գոտու ձիերը նույնպես պայքարի մեջ են մահիկի դեմ, սակայն սրանք նույն կենդանիների ոճավորված, ֆանտաստիկ պատկերներով են հանդես գալիս։ Գոտին նմանություն ունի նաև Հաղպատի բրոնզե գոտու վրայի ոլորահյուս, անվերջանալի զարդերի հետ[5]։

Լորուտի գոտու զարդերից ամենաուշագրավը գոտու դաշտի եզրամասերի պարանահյուս, եռաճյուղ, անվերջանալի զարդն է՝ երեք հզոր տարրերի՝ երկրային, երկնային և ջրային ուժերի հավիտենականության խորհրդանիշը, որն իր խոր արտահայտությունն է գտել Հայկական լեռնաշխարհի տարբեր ժամանակների հուշարձանների զարդամոտիվներում։ Լորուտի գոտու՝ տեղական արտադրանք լինելու փաստի մատին չերկբայելով հանդերձ, մի քանի զուգահեռներով ցույց տանք Հայաստանում հայ վարպետների կողմից նման զարդանախշերի կիրառման անընդմիջությունը։ Այսպես, Լորուտի գոտու եզրերի նախշազարդերին նման են Քյոլ-թեփեի պեղումներից հայտնաբերված կընքադրոշմների երկհյուս, երկճյուղ նախշազարդերը[6] (աղ. I, 1)։ Նման մեկ այլ հյուսազարդի դրոշմվածք է պահվում Հայաստանի պատմության պետական թանգարանում[7] (աղ. I, 2)։ Հիանալի օրինակ են Գառնիի հեթանոսական տաճարի բակի՝ առաջին դարում կառուցված բաղնիքի խճանկարե հատակի եզրագծերի եռագույն, եռաճյուղ հյուսվածքը[8] (աղ. I, 3), Դվին քաղաքի պեղումների ժամանակ հայտնաբերված եռաճյուղ, եռահյուս նախշազարդերը Կաթողիկե եկեղեցու (V դ.) մնացորդների քիվերի վրա[9], Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան մի բաղադրամասի վրա քանդակազարդված երկճյուղ, երկհյուս նախշը, որը հավանաբար VII դարի գործ է[10], Տաթևի վանքի ճոճվող սյան (կառուցված 895 թվականին) արևի ժամացույցի հիմքի գոտեպատ նախշը, Վահանավանքի մեծ տաճարի (X դ.) արևմտյան դավթի քիվերի նախշազարդը[11]։ Բացառիկ նմանություն կա Բջնիի 1031 թ. կառուցված աստվածածին եկեղեցու որմնամույթերի նախշազարդերի հետ[12]։

---

3 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 140, рис. 58.

4 Հ. Ա. Մարտիրոսյան, Ուշ բրոնզեդարյան բնակավայրերը և դամբարանադաշտերը, Երևան, 1969, աղ. 40, 41։

5 А. А. Мартиросян, Армения в эпоху..., с. 137, рис. 57.

6 Ա. Խաչատրյան, Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն, Երևան, 1933, էջ 251, նկ. 45։

7 Նույն տեղում, նկ. 46։

8 А. Саинян, Гарни, Гегард, М., 1958.

9 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 99, նկ. 70։

10 В. Арутюнян, Эчмиадзин, М., 1957 (տե՛ս զանգակատուն նկարի դետալը)։

11 Գր. Գրիգորյանի անտիպ նյութերից։

12 «Հայկական արվեստ», առաջին հատոր, հին և միջին դարեր, Երևան, 1974, նկ. 12։

1

2



3

Աղյուսակ II

Նույն զարդամոտիվը դարեր շարունակ մեծ կիրառություն է գտել խաչքարերի արվեստում։ Այսպես. նման են Գոշավանքի գավիթի խաչքարի շրջանակի երիզանախշի մի խաչի վերին եզրի հյուսվածքազարդը[13], Գեղարդավանքի XIII դ. մի խաչքարի վերին եզրի հյուսվածքազարդը[14]. Բջնիի խաչքարերից մե-

13 Տե՛ս «Հայկական խաչքարեր», էջմիածին, 1973, նկ. 106։

14 Նույն տեղում, նկ. 121։

կի (XIII դ.) եզրազարդը[15] (նկ. 2), Հոռոմոսի եկեղեցու քանդակազարդ առաստաղը[16] (աղ. II, 1), Մբենիի XIII—XIV դդ. խաչքարերի խմբի վերին ձախակողմյան խաչքարի եզրազարդի երկհյուս նախշը[17] (աղ. II, 2), Եղեգնաձորի շրջանի Աղավնաձոր գյուղի XIII—XIV դդ. խաչքարի վերին եզրահյուսվածքազարդը[18] (աղ. II, 3)։ Երևանի Կաթողիկե եկեղեցու (1695 թ. կառուցված) դահլիճի արևմտյան պատին հագցրած խաչքարի եռաճյուղ, կրկնահյուս զարդամոտիվը[19], Երևանի Պողոս-Պետրոս եկեղեցու (1693 թ. կառուցված) հարավային պատի խաչքարի երկճյուղ, երկհյուս զարդը[20], նույն եկեղեցու արևմտյան պատին մարմարե խաչքարի բեկորի երկճյուղ, երկհյուս զարդը[21] (1693 թ.), Քոբայրի վանքից ոչ հեռու Կուլեթ ամրոց-դիտակետի տարածքից հայտնաբերած խաչքարի վրայի զարդը[22] և այլն։ Օրինակները կարելի է շարունակել, սակայն այսքանն էլ բավական է մեր միտքը հաստատելու համար։ Այս բոլորին ավելացնենք նաև, որ գոտու հետ հայտնաբերված կիսասֆերիկ գլխիկներով կախազարդերը միանգամայն նման են միջնադարյան և ավելի ուշ ժամանակների զավաղանների զարդագլխիկներին, որոնցից բազմաթիվ օրինակներ կարելի է տեսնել էջմիածնի Մայր տաճարի թանգարանում և այլուր։

Ինչ խոսք, սրանք պատահական նմանություն չեն։ Վերը նշված օրինակները հաստատում են, որ քննված զարդամոտիվները ունեն տեղական ծագում և սերնդե-սերունդ ավանդաբար փոխանցվել են ու կիրառվել մինչև մեր օրերը։ Հետևաբար, Լորուտից հայտնաբերված գոտին կարող է նոր լույս սփռել տեղական մշակույթի ծագման և այդ մշակույթը կերտող ժողովրդի՝ հայ ժողովրդի, բնօրրանը որոշելու հարցերի վրա։

ОРНАМЕНТЫ БРОНЗОВОГО ПОЯСА ИЗ ЛОРУТА

ВАРШАМ АВЕТЯН

Резюме

В 1979 г. при раскопках могильника эпохи поздней бронзы (с. Лорут Туманянского района) был обнаружен бронзовый пояс, на котором изображены фигуры лошадей, хищных зверей, рыб и птиц, символизирующих, по всей видимости, борьбу животного и растительного мира против сил мрака. Любопытна семантика триадных спиралей, обрамляющих пояс. Вероятно, они представляют идею единства злых сил—небесных, земных и водных в их борьбе против света во Вселенной. На протяжении тысячелетий этот мотив использовался в армянском искусстве, в частности, в искусстве хачкаров. Этот факт не случаен и свидетельствует о том, что народ, создавший эту культуру, автохтонен.

---

15 Նույն տեղում, էջ 136։

16 Թ. Թորոմանյան, Նյութեր հայկական ճարտարապետության, Երևան, 1942, էջ 177, նկ. 105։

17 «Հայկական խաչքարեր», էջ 175։

18 Նույն տեղում, նկ. 123։

19 Կ. Ղաֆադարյան, Երևանի միջնադարյան հուշարձաններ, Երևան, 1975, էջ 146, նկ. 93։

20 Նույն տեղում, էջ 162, նկ. 72։

21 Նույն տեղում, նկ. 118։

22 Մեր անտիպ նյութերից։